

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1141-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառումը		Ակնկալվող արդյունքը	Կատարման ընթացքը
5.	Հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	2016-2018թթ. 4 ոլորտային ծրագրերի ընդունումից հետո կատարվել են այլ ոլորտների վերաբերյալ ուսումնասիրություններ, անհրաժեշտության դեպքում ներկայացվել են առաջարկություններ հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ	Մի շարք ոլորտներում կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ: Մասնավորապես, բիզնես, սոցիալական ապահովության, դատաիրավական, պաշտպանության ոլորտներում կատարվել են կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություններ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 4 ոլորտային ծրագրերը դեռևս չեն ընդունվել՝ ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ դեռևս առաջարկություններ չեն ներկայացվել:
10.	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին հանրային ծառայության	Կատարվել են անհրաժեշտ ուսումնասիրություններ: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին	Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ: Միաժամանակ, ՀՀ Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում

	<p>ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքների տրամադրում</p>	<p>տրամադրվել են հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքներ</p>	<p>ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-262-Ա կարգադրության համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ արդարադատության նախարարի գլխավորությամբ: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Մասնավորապես, նախատեսվում է ստեղծել հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին՝ բարեփոխելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կարգավիճակը՝ ընդլայնելով լիազորությունները: Փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Վերոնշյալ փաթեթով հակակոռուպցիոն մարմինն տրամադրվել են սույն միջոցառմամբ սահմանված համապատասխան գործիքներ:</p>
--	---	--	---

<p>11.</p>	<p>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության գործընթացի վերանայման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է:</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է: Միաժամանակ, ՀՀ Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-262-Ա կարգադրության համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ արդարադատության նախարարի գլխավորությամբ: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Մասնավորապես, նախատեսվում է ստեղծել հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին՝ բարեփոխելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կարգավիճակը, ընդլայնելով լիազորությունները: Փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Փաթեթով Հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության գործընթացն ամբողջությամբ վերանայվել է՝ 2015 թվականին ընդունված ՀՀ</p>
------------	---	---	---

			սահմանադրության փոփոխությունների համատեքստում:
13.	Շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգերի և օրենսդրական դաշտի ձևավորում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Օրենսդրությամբ սահմանվել են շահերի բախման կանխարգելման մասին դրույթներ: Ստեղծվել են շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգեր:	Միջազգային փորձն ուսումնասիրվել է, մշակվել է վերլուծության նախագիծ: Վերլուծության արդյունքների հիման վրա «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում ներառվել են շահերի հայտարարագրման վերաբերյալ դրույթները: Նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:
14.	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ընդունում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է:	Նշյալ հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ համատեղ իրականացրել է միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն: Տվյալ հարցը կարգավորվել է ինստիտուցիոնալ փաթեթի շրջանակներում: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծով Հանձնաժողովին վերապահվել է իրավասու մարմնին կամ պաշտոնատար

			<p>անձին անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ) ներկայացնելու լիազորություն:</p>
16.	<p>Հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավում</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է: Իրականացվել են գործուն քայլեր հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման համակարգի բարելավման նպատակով:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի վերանայման վերաբերյալ: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը: Միաժամանակ ներդրվել է շահերի</p>

			<p>հայտարարագրման ինստիտուտը: Նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:</p>
17.	<p>Հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացում՝ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է: Նախագծով սահմանվել են ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել է հայտարարագրման գործընթացի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ: Միջազգային փորձի ուսումնասիրության և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում իրացվել է հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացման հարցը:</p>

18.	Հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Մշակվել և հաստատվել է հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագիրը:	ՀՀ արդարադատության նախարարության առաջարկությամբ ՀՀ վարչապետը 2016 թվականի մարտի 25-ի N 02/41.2/4181-16 հանձնարարականով հանձնարարել է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին մշակել հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագիր: Ծրագրի նախագիծը մշակվել է և ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել կարծիքի շահագրգիռ մարմիններին: Նախագիծը ներկայումս գտնվում է շրջանառման և լրամշակման փուլում:
20.	Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրություններն իրականացված են	ՀՀ արդարադատության նախարարության առաջարկությամբ ՀՀ վարչապետը 2016 թվականի փետրվարի 2-ի N02/41.2/1274-16 հանձնարարականով հանձնարարել է բոլոր հանրապետական գործադիր մարմիններին տրամադրել իրենց կողմից մատուցվող ծառայությունների, դրանց ժամկետների վերանայման հնարավորության վերաբերյալ տեղեկատվություն: Նշված տեղեկատվությունը հավաքվել և ՀՀ արդարադատության նախարարության կողմից ուղարկվել է ՀՀ կառավարության

			<p>աշխատակազմ՝ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից նշված ժամկետների ուսումնասիրությունը իրականացնելու համար: «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ժամկետների կրճատման հնարավորության վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակվում են:</p>
23.	<p>Պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման ոլորտում վարչարարության նվազեցման նպատակով պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում և վարում</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է: Պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման ոլորտում վարչարարության նվազեցման նպատակով պետական միասնական գրանցամատյանը մշակվել է:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն լիցենզիաների էլեկտրոնային միասնական գրանցամատյանի ներդրման վերաբերյալ: Մշակվել է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որը ներկայումս</p>

			գտնվում է լրամշակման փուլում: շահագրգիռ գերատեսչությունների կարծիքների հիման վրա կազմված ամփոփաթերթի հետ միասին ներկայացվել է հասարակական կազմակերպություններին՝ կարծիքի: Միևնույն ժամանակ, Եվրոպական միության հետ արդեն իսկ տարվում են բանակցություններ: Մշակվել է համապատասխան ծրագրային ապահովում (software):
25.	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային գրանցման համակարգի վերանայում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Իրականացվում են քննարկումներ:	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Բանակցություններ են տարվում Եվրոպական միության հետ: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային գրանցման ծրագիրը ներդրվում է փուլային սկզբունքով:
28.	Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման	Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուները	Սույն թվականի հունիսի 27-ին Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների համար կազմակերպվել է աշխատաժողով:

	<p>պատասխանատուների վերապատրաստում</p>	<p>շարունակաբար վերապատրաստվում են:</p>	<p>Վերջինս կազմակերպվել և անց է կացվել Համաշխարհային բանկի և Իտալիայի հանրային կառավարման ազգային դպրոցի կողմից: Աշխատաժողովին մասնակցել են մոտավորապես 30 մասնակից՝ ՀԳՄ-ներից և Համաշխարհային բանկից: Քննարկված թեմաների շրջանակն ընդգրկում էր գիտելիքի և փորձի փոխանակման նպատակով կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ուսումնական պլատֆորմի ներդրում: Վերջինս իրականացվելու է պատասխանատու աշխատակիցներից կազմված փորձագիտական համայնքի ստեղծման միջոցով: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են նաև ռիսկի կառավարման սկզբունքներ, հայեցակարգեր և գործընթացներ:</p>
29.	<p>Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետների վերանայում</p>	<p>Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետները վերանայված են: Ներկայացված է առաջարկություն պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ կատարելու մասին:</p>	<p>Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Քննարկվել է տեղեկատվության տրամադրման ժամկետների ողջամտությունը: ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել և ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ</p>

			<p>հաստատվել է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը»: Վերոնշյալ կարգի շրջանակներում սահմանվել են վճարների դիմաց առավել կարճ ժամկետներում տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ:</p> <p>Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և ներկայումս լրամշակման փուլում է գտնվում «Տեղեկատվության ազատության մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով վերանայվել են պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետները:</p>
30.	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերլուծություն,	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: «Տեղեկատվության ազատության	ՀՀ արդարադատության նախարարությունը համագործակցել է Գերմանիայի միջազգային համագործակցու

	<p>անհրաժեշտության դեպքում դրանում լրացումների և փոփոխությունների կատարում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին</p>	<p>մասին» ՀՀ օրենքը վերլուծվել է: Անհրաժեշտության դեպքում ներկայացվել է առաջարկություն դրանում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ օրենքը համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:</p>	<p>թյան ընկերության հետ, որի արդյունքում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության միջազգային փորձագետի կողմից վերլուծվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է «Տեղեկատվության ազատության մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:</p>
<p>31.</p>	<p>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում</p>	<p>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը մշակված են: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը հաստատված են:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել և ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ հաստատվել է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից</p>

			տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը»:
32.	<p>«Հ հանրային խորհրդի նիստերի ընթացքում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերի քննարկում</p>	<p>«Հ հանրային խորհրդի նիստերի ընթացքում քննարկվում են կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերը: Բարձրացվում է հանրային իրազեկումը կոռուպցիայի գոյության, պատճառների, ծանրության և դրա հասցրած վնասի վերաբերյալ: Տվյալ հարցերի վերաբերյալ քննարկումների մասին տեղեկատվությունը հրապարակվում է և հասանելի է հանրության համար:</p>	<p>2015 թվականի դեկտեմբերին ՀՀ հանրային խորհրդում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում, որին մասնակցել են ինչպես ՀՀ Հանրային խորհրդի անդամներ, այնպես էլ ՀՀ արդարադատության ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 32-րդ կետը, որի արդյունքում սույն թվականի հունվարին ՀՀ հանրային խորհրդի նախագահի հանձնարարականով ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ: 2016 թվականի ապրիլի 29-ին տեղի է ունեցել ՀՀ հանրային խորհրդի լիազումար նիստ, որտեղ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը: ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ սույն թվականի նոյեմբերի 17-ին կայացել է նաև ՀՀ հանրային խորհրդի աշխատանքային խմբի նիստ, որտեղ քննարկվել են ՀՀ</p>

			արդարադատության նախարարության կողմից մշակված ապօրինի հարստացման քրեականացման օրենսդրական նախագծերը և տեղեկատվության ազատության հայեցակարգը:
34.	Պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցների մշակում և հաստատում	Մշակված են ուղեցույցներ, որոնք թույլ են տալիս գնահատելու պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը: Պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցները հաստատված են	«Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-263-Ա կարգադրության համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ, որի շրջանակներում այս հարցը քննարկվում է:
35.	Պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման լրացուցիչ չափանիշների ներդրման	Ներկայացված են առաջարկություններ պետական ծառայողների ընտրության և	«Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ

	վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	առաջխաղացման լրացուցիչ չափանիշների ներդրման վերաբերյալ:	ստեղծելու մասին» ՆԿ-263-Ա կարգադրության համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ, որի շրջանակներում քննարկվում է նաև այս հարցը:
37.	Քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացված են առաջարկություններ քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանման վերաբերյալ:	Հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների հիման վրա ներակայումս մշակվում են քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշներ:
39.	Հանրային լուսմների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի օրենսդրորեն կարգավորում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացված է առաջարկություն հանրային լուսմների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի վերաբերյալ:	Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 1134-Ն որոշումը, որով որպես պարտադիր պահանջ նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերը մշակող մարմինների կողմից տեղադրել Հայաստանի Հանրապետության արդարադատության

			<p>նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft)՝ հանրային քննարկումներ կազմակերպելու նպատակով:</p>
41.	<p>Քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցություն կոռուպցիոն ռիսկերի նվազման ուղղությամբ:</p>	<p>Քաղաքացիական հասարակության ներուժի և գիտելիքների ներգրավմամբ համատեղ վերլուծությունների և առաջարկությունների ներկայացում մշտադիտարկումների արդյունավետ իրականացման համար՝ հասարակությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը նպաստելու և ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով:</p>	<p>«Արդարադատության նախարարության, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի» և «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» համագործակցությամբ ու ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ԵՄ աջակցությամբ 2015 թվականի սեպտեմբերի 23-ին ազդարարվել է «Պետություն-քաղաքացիական հասարակություն» հակակոռուպցիոն հարթակի ստեղծման մասին, ինչը լրացուցիչ հնարավորություն է ստեղծում կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունն ամրապնդելու համար: «Արդարադատության նախարարության և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ շարունակաբար անց են կացվում հակակոռուպցիոն միջոցառումներ: Մասնավորապես, 2015 թվականի դեկտեմբերի 10-11-ը «Արդարադատության նախարարության,</p>

			<p>քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել և անց է կացվել «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը: 2015 թվականի դեկտեմբերի 8-25 ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ («Ապօրինի հարստացման համար պատասխանատվություն», «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման հնարավորություններն ու մարտահրավերները», «Հակակոռուպցիոն ամենամյա մրցանակաբաշխություն): Հակակոռուպցիոն ռազմավարության</p>
--	--	--	--

			<p>միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով 2015 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության աջակցությամբ կազմակերպվել է դոնորների համակարգման հանդիպում, որին մասնակցել են միջազգային կառույցների, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:</p> <p>2016 թվականի հունվարի 22-ին ՀՀ արդարադատության նախարարի՝ «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 18-Ա և «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 19-Ա հրամաններով ստեղծված աշխատանքային խմբերում ևս ներկայացված են մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:</p> <p>2016 թվականի նոյեմբերի 17-ին կայացել է Կառավարություն - Քաղաքացիական հասարակության հակակոռուպցիոն աշխատանքային խմբի</p>
--	--	--	--

			<p>ընդլայնված հանդիպում «Հայաստանում ապօրինի հարստացման քրեականացմանն ուղղված աշխատանքների ընթացքը» թեմայով:</p> <p>2016 թվականի նոյեմբերի 23-ին «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել «Կառավարություն-քաղաքացիական հասարակություն» հակակոռուպցիոն աշխատանքային խմբի ընդլայնված հանդիպում, որի շրջանակներում տեղի է ունեցել «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացում. հակակոռուպցիոն անկախ մարմնի երկու մոդելների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում» թեմայով քննարկում:</p>
43.	<p>ՀՀ կառավարության նիստի 2008 թ-ի նոյեմբերի 20-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/ խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է</p> <p>Իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջարկները մշակված են</p> <p>Իրականացվել են հանրային քննարկումներ՝ որոնց հիման վրա լրամշակված</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, բազմաթիվ հանրային քննարկումների արդյունքում ամփոփվել և 2015 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և</p>

<p>լրացումների կատարում, որոնք՝</p> <ul style="list-style-type: none"> - Կհստակեցնեն և կտարանջատեն կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները, - կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության՝ բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները, - կսահմանեն կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և 	<p>փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը</p>	<p>Հայաստանի հանրապետության նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը, որով հստակեցվել և տարանջատվել են կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, ճշգրտվել են դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները, սահմանվել են խորհուրդների ձևավորման և գործունեության բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները, սահմանվել է կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար:</p>
---	---	---

	<p>դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար:</p>		
44.	<p>Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում</p>	<p>1. Անցկացվում են տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ</p> <p>2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստեղծվել են իրավական հիմքեր</p> <p>3. Իրականացվում է գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցում</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 296-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Տվյալ նախագծի համաձայն ստեղծվել է կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց միասնական հարթակ (e-draft): Տվյալ հարթակը նպատակ ունի իրագրելու հանրությանը գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի մասին (այդ թվում՝ բաժանորդագրման սկզբունքով): Քաղաքացիական հասարակությանը հնարավորություն է</p>

			<p>ընձեռվել ներկայացնելու առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ (ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, չընդունելու հիմնավորումները):</p> <p>Վերոնշյալ հարթակը սույն թվականի դեկտեմբերի 1-ից մինչև հունվարի 25-ը գործարկվել է պիլոտային կարգով: Ներկայումս հարթակը գործարկվում է:</p> <p>ՀՀ արդարադատության նախարարությունը կազմակերպել է e-draft.am կայքէջը գործնականում կիրառելու վերաբերյալ մի շարք հատուկ դասընթացներ, որոնց մասնակցել են ինչպես գերատեսչությունների աշխատակիցներ, այնպես էլ հանրության տարբեր խմբերի ներկայացուցիչներ:</p> <p>Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակին վերաբերող դասընթացի մասնակիցներին ներկայացվել են համապատասխան պետական մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կայքում տեղադրելու հնարավորությունները և առանձնահատկությունները:</p>
--	--	--	--

46	<p>Կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործող տեսակների վերաբերյալ վերլուծության իրականացում՝ համադրելով միջազգային փորձի հետ</p>	<p>Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Իրականացվել է վերլուծություն կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործող տեսակների վերաբերյալ: Վերլուծությունն իրականացվել է՝ համադրելով միջազգային փորձի ուսումնասիրությունների հետ:</p>	<p>Սույն միջոցառման արդյունավետ իրականացումն ապահովելու նկատառումներով ՀՀ արդարադատության նախարարությունը համագործակցել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ ուսումնասիրել է միջազգային փորձը: Մշակվել է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործող տեսակների՝ միջազգային փորձի հետ համապատասխանության վերաբերյալ վերլուծության նախագիծ:</p>
----	---	--	---

47	Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծության իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Անցկացվում են քննարկումներ:	<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2016 թվականի հունվարի 22-ի «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 18-Ա հրամանի հիման վրա ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է ապօրինի հարստացման քրեականացման հնարավոր հեռանկարները Հայաստանի Հանրապետության քրեաիրավական քաղաքականությունում: Հանցակազմի քրեականացման հարցի շուրջ կազմակերպվել են նաև բազմաթիվ քննարկումներ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:</p> <p>Արդյունքում, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 20-րդ հոդվածի պահանջի հիման վրա և ի կատարումն 2016 թվականի հունիսի 15-ին և հունիսի 17-ին կայացած՝ Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում տրված հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է</p>
----	--	---	---

			<p>դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերը, որոնց համաձայն առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը լրացնել 310.1-րդ հոդվածով՝ ամրագրելով ապօրինի հարստացման հանցակազմը և սահմանել քննչական ենթակայությունը:</p> <p>Ապօրինի հարստացումը քրեականացնող նախագիծն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:</p>
48	<p>Կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգերը գործարկելուն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում</p>	<p>Միջազգային փորձն ուսումնասիրված է: Անցկացվում են քննարկումներ:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարությունը տվյալ կետի կատարումն ապահովելու շրջանակներում համագործակցում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ: ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի փորձագետների կողմից ուսումնասիրվել է միջազգային փորձը:</p> <p>Միաժամանակ, ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ կատարում է Կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող</p>

			կառուցակարգերի վերաբերյալ վերլուծություն:
49	Կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը հստակ տարանջատելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացվել է առաջարկություն կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը հստակ տարանջատելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ: Առաջարկությունը ներկայացնելիս հաշվի են առնվել ինչպես այդ հանցանքների բնույթը, այնպես էլ դրանց կատարման մեջ մեղադրվող անձանց առանձնահատկությունները:	Կոռուպցիոն հանցագործությունների քննչական ենթակայության վերաբերյալ կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն: Միննույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների քննչական ենթակայության գործող իրավիճակի և առաջարկվող տարբերակի վերաբերյալ համապատասխան տեղեկանք: Տեղեկանքը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն՝ ներկայումս քննարկվում է շահագրգիռ պետական մարմինների հետ:
50	Կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացվել է առաջարկություն կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման գիտականորեն	ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ, միջազգային փորձի հիման վրա մշակել է կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկա:

	միասնական մեթոդիկայի մշակում	հիմնավորված և միասնական մեթոդիկա մշակելու վերաբերյալ:	
51.	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքների օրենքով սահմանում	Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Մշակված է օրենսդրական փաթեթ:	<p>«Ազգային արդարադատության նախարարության և ՀՀ քննչական կոմիտեի կողմից ուսումնասիրվել է Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց՝ ազդարարների, իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային փորձը: Միջազգային պայմանագրերի պահանջներին համահունչ, ինչպես նաև ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Ազգարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Փաթեթի շրջանակներում կարգավորվում են ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Փաթեթի շրջանակներում ներդրվում է նաև</p>

			<p>ազդարարների կողմից միջազգայնորեն սերտիֆիկացված էլեկտրոնային համակարգի միջոցով անանուն հաղորդումների ներկայացման գաղափարը: Նախագիծը սույն թվականի մայիսի 11-ին հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:</p>
52	<p>Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար գործուն միջոցների ձեռնարկում</p>	<p>Հանրությունը պարբերաբար տեղեկացվում է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Հրապարակվում է ամփոփ տեղեկատվություն ձևավորված կարգապահական, վարչական և դատական պրակտիկայի վերաբերյալ:</p> <p>Հանրությանը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում պետական ծառայողների պաշտոնանկության կամ տույժերի վերաբերյալ, հիմնավորումները հանրայնացվում են՝ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության և այլ երաշխիքների տրամադրման նկատառումները:</p>	<p>Մշակվել, շրջանառվել և սույն թվականի մարտի 2-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Նախագծով նախատեսվում է, որ ՀՀ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, պարտավոր է հրապարակել հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում: Ըստ քննչական ենթակայության՝ հաղորդումը պետք է պարունակի տեղեկություններ նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Ընդ</p>

			<p>որում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: Մինևույն ժամանակ, հաղորդումը կազմելու համար նախաքննության մարմինները, ըստ քննչական ենթակայության, յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 1-ը, ՀՀ գլխավոր դատախազություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: »:</p>
54	<p>Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրության իրականացում</p>	<p>2017-2018թթ. Կոռուպցիայի դեմ պայքարի գործող ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ կատարվել են ուսումնասիրություններ, ուսումնասիրվել է միջազգային փորձը, անկախ հակակոռուպցիոն մարմին ստեղծելու վերաբերյալ առաջարկվող փաթեթը:</p>	<p>2016 թվականի հունվարի 22-ին ՀՀ արդարադատության նախարարի՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 19-Ա հրաման ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում քննարկվել է նշյալ հարցը: Աշխատանքային խմբի կողմից կազմված</p>

			<p>վերլուծությունը քննարկվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 15-ի և 17-ի նիստերի ընթացքում: Միաժամանակ, ՀՀ Նախագահի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-262-Ա կարգադրության համաձայն ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ արդարադատության նախարարի գլխավորությամբ: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակվել է հակակոռուպցիոն մարմնի մասին օրենսդրական փաթեթ: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հենքի վրա նախատեսվում է ստեղծել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն իրականացնելու է կոռուպցիայի կանխարգելման, այդ թվում՝ էթիկայի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, բարձրաստիճան պաշտոնատար անձի և հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների պահպանմանը, ակտիվների, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգերի</p>
--	--	--	--

			կենսագործմանը, կրթական, հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված գործառույթներ:
--	--	--	---

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից 2016թ.-ի ընթացքում շարունակվել են Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 33-րդ և 45-րդ կետերով ներկայացված հետևյալ աշխատանքները:

Կետ 33. Հանրային ծառայողների վերապատրաստում՝ կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/բարեվարքության (ինթեգրիթի) ձևավորման և տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտություններ թեմաներով

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման կատարելագործման, հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի հմտությունների բարելավման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը իրականացրել է համայնքային ծառայողների վերապատրաստումներ: Նշված վերապատրաստումներն իրականացվել են համապատասխան ծրագրերի համաձայն, որոնցում ներառված են կոռուպցիայի դեմ պայքարի, ինթեգրիթի ձևավորման և տեղեկատվության ազատությանը վերաբերող թեմաներ:

2016 թվականի ընթացքում նման ծրագրերով վերապատրաստվել են 495 համայնքային ծառայողներ:

Կետ 45. Հայաստանի 20000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծում, թարմացում, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու

նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցում և ավագանու նիստերի առցանց հեռարձակում

Համայնքապետարանների համացանցային կայքեր

ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների հետ համատեղ իրականացված աշխատանքներն ուղղված են եղել, մասնավորապես, 20000 և ավել բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի կիրառության մակարդակի բարձրացմանը, դրանց բովանդակության մշտական թարմացմանը և կայքերում՝ օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվության (այդ թվում՝ համայնքային իշխանության կողմից ընդունված իրավական ակտերի) հրապարակմանը:

Արդյունքում, լիարժեք գործող և պահանջվող բովանդակությամբ համալրված համացանցային կայքեր ունեն հանրապետության 20000 և ավելի բնակիչ ունեցող հետևյալ համայնքները.

1.	Գյումրի	gyumricity.am
2.	Վանաձոր	vanadzor.am
3.	Հրազդան	hrazdan.am
4.	Աբովյան	abovyan-kotayk.am
5.	Էջմիածին	ejmiatsin.am
6.	Կապան	kapan.am
7.	Արմավիր	qaxaqarmavir.am
8.	Գավառ	gavariqaghaqapetaran.am
9.	Չարենցավան	charentsavan.am
10.	Արտաշատ	artashat.am

11.	Սևան	sevancity.am
12.	Աշտարակ	ashtarak.am
13.	Մասիս	masiscity.am
14.	Գորիս	goriscity.am
15.	Ալավերդի	alaverdi.am
16.	Արթիկ	artik.am
17.	Դիլիջան	dilijancity.am

Հարկ է նշել, որ բացի վերը նշվածներից, 2016 թվականի ընթացքում համացանցային կայքեր են գործարկվել հանրապետության ավելի քան 150 համայնքներում՝ <http://infosys.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=2&dt=Sites&tv=-2> :

Համայնքապետարանների համացանցային կայքերի ճնշող մեծամասնությունը գործում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) հենքի վրա (այդ թվում՝ 20000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներից 10-ը. **Արովյան, Կապան, Չարենցավան, Արտաշատ, Սևան, Աշտարակ, Մասիս, Գորիս, Արթիկ և Դիլիջան**): Այս կայքերի կանոնավոր շահագործումն ապահովելու նպատակով՝ համայնքապետարանների աշխատակիցները, անհրաժեշտության դեպքում, ՀԿՏՀ-ն սպասարկող կազմակերպության հետ կնքված պայմանագրերի շրջանակներում, պարբերաբար վերապատրաստվել են: 2016թ.-ի ընթացքում վերապատրաստման դասընթացների են մասնակցել վերոնշյալ 10 համայնքապետարանների մոտ 50 աշխատակիցներ:

Ավագանու նիստերի, ՏԻՄ-երի ասուլիսների և հանրային քննարկումների առցանց հեռարձակման ապահովում

Ավագանու նիստերի և հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումը ներդրվել է Հայաստանի Հանրապետության 20000 և ավելի բնակչություն ունեցող թվով 17 համայնքներում. Գյումրի, Վանաձոր,

Հրազդան, Աբովյան, Էջմիածին, Կապան, Արմավիր, Գավառ, Չարենցավան, Արտաշատ, Սևան, Աշտարակ, Մասիս, Գորիս, Ալավերդի, Արթիկ և Դիլիջան:

Բացի վերը նշված 17-ից, 2016թ.-ի ընթացքում ավագանու նիստերի առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովվել են նաև հետևյալ 11 համայնքները. Տաթև, Թումանյան, Սիսիան, Սպիտակ, Եղվարդ, Արարատ, Վայք, Ջերմուկ, Իջևան, Ստեփանավան, Մեղրի:

Վերը թվարկված 28 համայնքներից 25-ը (բացի Գյումրի, Վանաձոր և Արմավիր համայնքներից), ընդգրկված լինելով Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող՝ «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրում, ստացել են այդ նպատակով տրամադրված անհրաժեշտ սարքավորումներ (յուրաքանչյուր համայնքին՝ ավելի քան 1 մլն դրամ ընդհանուր արժողությամբ), ծրագրի շրջանակներում ուսուցանվել են այդ համայնքների տեխնիկական մասնագետները:

2016թ.-ի ընթացքում ավագանու նիստերի կամ տեղական նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումներ են իրականացրել հետևյալ 13 համայնքները. Չարենցավան, Հրազդան, Սիսիան, Կապան, Էջմիածին, Գյումրի, Վանաձոր, Արմավիր, Սպիտակ, Սևան, Գավառ, Եղվարդ և Աշտարակ:

Առցանց հեռարձակումների վերաբերյալ հանրային իրազեկումն ապահովելու նպատակով **Youtube** ծառայության ալիքներ են բացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, մարզպետարանների և վերոնշյալ համայնքապետարանների կողմից, որոնցում տեղադրվում են այս մարմինների գործունեությունը լուսաբանող տեսանյութերը, այդ թվում՝ առցանց հեռարձակվածները: Նախարարության, մարզպետարանների և առցանց հեռարձակումներ իրականացնող համայնքների համացանցային պաշտոնական

կայքերի գլխավոր էջերում զետեղվել են այդ հեռարձակումներին մասին իրազեկող և վերոնշյալ մարմինների՝ Youtube ծառայության հաշվառումներին տանող տեքստային հղումներ:

Բացի այդ, համայնքների ավագանու նիստերի առցանց հեռարձակումների վերաբերյալ համայնքապետարանների կողմից ուղարկված տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է նախարարության պաշտոնական լրահոսում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին ռեսուրսներով համալրման ապահովում (12-րդ միջոցառում)–այն է՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պետք է ունենա աշխատակազմ և բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ներկայիս դրությամբ չունի աշխատակազմ և բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում: Հետևաբար, ինչպես ՀՀ 2016 թվականի, այնպես էլ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով այդ հանձնաժողովի աշխատակազմի պահպանման համար ծախսեր նախատեսված չեն:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված 3-րդ մասի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է ՀՀ Նախագահի աշխատակազմը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացված ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, մասնավորապես «Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի կանխարգելման հարցերով մարմնի մասին» և ««Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով սահմանվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Կոռուպցիայի կանխարգելման հարցերով հանձնաժողով:

2. Պետական մարմինների կողմից լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրման խթանում՝ դիտարկելով էլեկտրոնային եղանակով լիցենզիաների (առնվազն պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ) տրամադրման հնարավորությունը (22-րդ միջոցառում) – այն է՝ պետական մարմիններում իրականացվել են

ուսումնասիրություններ, պետական մարմիններում իրականացվել է տեխնիկական պայմանների ապահովումը, օրենսդրության մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանցից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծեր, որոնց համաձայն իրավաբանական անձանց լիցենզիաները կտրամադրվեն էլեկտրոնային եղանակով:

Միաժամանակ, հաշվի առնելով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի ընդունումը, որի համաձայն՝ նախկինում պարզ ընթացակարգով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները 2015 թվականի դեկտեմբերի 5-ից համարվեցին ծանուցման ենթակա գործունեության տեսակներ, ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակել և ներկայացրել է <https://e-gov.am> կայքի լիցենզիաների հայտերի ընդունման համակարգի մեխանիզմով նաև ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար ծանուցումների հաշվառման համակարգի ներդրման վերաբերյալ տեխնիկական առաջադրանքը:

3. Լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայում բոլոր ոլորտներում՝ լրացուցիչ պահանջների հնարավորինս պարզեցում (24-րդ միջոցառում) – այն է՝ միջազգային փորձն ուսումնասիրված է, պետական և

մասնավոր հատվածների համագործակցությամբ ստեղծված է աշխատանքային խումբ, իրականացվում են քննարկումներ բոլոր ոլորտներում լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայման վերաբերյալ.

«Քինանսների նախարարության կողմից տրվող լիցենզիաների տրամադրման չափանիշների, պայմանների վերանայման և հստակեցման նպատակով «Քինանսների նախարարի 2016 թվականի օգոստոսի 15-ի N 806-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խումբը, համատեղ քննարկումների արդյունքում ուսումնասիրելով «Ք խաղային բնագավառի (շահումով խաղեր, խաղատներ, ինտերնետ շահումով խաղեր և վիճակախաղեր) կազմակերպման, աուդիտորական և ինկասացիոն ծառայությունների մատուցման ոլորտների լիցենզավորման ընթացակարգերի հիմնական սկզբունքային մոտեցումները, «Ք կառավարության աշխատակազմ է ներկայացրել համապատասխան առաջարկություններ: Բացի այդ, լիցենզավորման բնագավառում որակավորման ստուգումներն առավելագույնս թափանցիկ և պարզ ընթացակարգով իրականացնելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» «Ք կառավարության որոշումների նախագծերը:

4. Որոշակի չափանիշներին համապատասխանող պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի մշակում և իրականացում (38-րդ միջոցառում) – այն է՝ որոշակի չափանիշներին համապատասխանող պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի իրագործում.

Ներկայումս մշակվում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականության վերանայման հայեցակարգ (այսուհետ՝ Հայեցակարգ), որում, ի թիվս այլ հարցերի, նախատեսվում է անդրադառնալ պարտադիր աուդիտի պահանջի ներդրմանը: Հայեցակարգը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ նշված միջոցառման իրականացման նպատակով «Պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի» մշակումը կիրականացվի Հայեցակարգի շրջանակներում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1141-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված՝ 2016 թվականին կատարման ենթակա միջոցառումների համաձայն՝

1. Ծրագրի 26-րդ և 27-րդ կետերով սահմանված միջոցառումներն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգում գործող հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերում՝

ա) նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձինք,

բ) Ծրագրերի իրականացման պատասխանատուների (անձ/ստորաբաժանման աշխատողներ) պաշտոնների անձնագրերում ամրագրվել են համապատասխան գործառույթներ:

2. Ի կատարումն Ծրագրի 33-րդ կետի՝ կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/ բարեվարքության (ինթեգրիթի) ձևավորման և տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտություններ թեմաներով 2016 թվականի ընթացքում անցկացվել է 8 ուսուցում, և վերապատրաստվել է 167 քաղաքացիական ծառայող:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ՆԿ-263-Ա կարգադրությամբ ձևավորվել է հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ, որի քննարկման շրջանակներում լուծում է ստանալու Ծրագրի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 16-րդ և 36-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. 2015թ. մարտին Հանրային խորհրդի ղեկավարության կողմից հավանության է արժանացել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել ՀԽ անդամ, Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի առաջարկությունների և նկատառումների փաթեթը՝ ՀՀ կառավարության «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի, ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կազմը հաստատելու մասին» 2015թ. փետրվարի 19-ի N 165-Ն որոշման և «ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմ հասարակական կազմակերպությունների ներգրավման և ռոտացիայի կարգը սահմանելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ:

Մի շարք նկատառումների շարքում առաջարկվել է մասնավորապես ա)կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում ավելացնել հասարակական կազմակերպությունների թիվը, բ)հստակեցնել և պարզեցնել ԿԴՊ խորհրդի կազմում ՀԿ-ների ընդգրկման կարգը, գ)ապահովել նաև Խորհրդի կազմում ՁԼՄ-ների ներգրավվածությունը և անմիջական դերակատարությունը:

2. Հանրային խորհրդի նախագահը հանդիսանում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդամ (համաձայնությամբ) և պարբերաբար մասնակցում է Խորհրդի աշխատանքներին:

3. 2015թ. դեկտեմբերին ՀՀ Հանրային խորհրդի նախագահի մոտ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում, որին մասնակցել են ՀԽ Պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, ՀԽ անդամ Գրիգոր Բաղիրյանը և ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել

է ՀՀ-ում Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի 32-րդ կետը, որը նախատեսում է Հանրային խորհրդի նիստերի ընթացքում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերի քննարկում, հանրային իրազեկման բարձրացում կոռուպցիայի գոյության, պատճառների, ծանրության և դրա հասցրած վնասների վերաբերյալ, այդ հարցերի քննարկումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և հասանելիության ապահովում հանրության համար:

4. 2016թ. հունվարին ՀԽ նախագահի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀԽ անդամների ներգրավմամբ, որի աշխատանքների համակարգումը հանձնարարվել է ՀԽ Պետաիրավական հարցերի և Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովների նախագահներին: Աշխատանքային խորհրդակցության արդյունքում որոշվել է տարեկան առնվազն չորս անգամ կազմակերպել հանդիպումներ և լսումներ՝ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ընթացքի քննարկման և առաջ եկած խնդիրների մասին իրազեկման նպատակներով: Որոշվել է նաև այդ աշխատանքներում ներգրավել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ակտիվորեն զբաղվող ոչ կառավարական տարբեր կազմակերպությունների:

5. Այդ խնդիրները քննարկվել են մարտ ամսին կայացած ՀՀ Հանրային խորհրդի լիազուգուր նիստի ընթացքում: 2016թ. մարտին ՀԽ նախագահ Վազգեն Մանուկյանի մոտ վերոնշյալ հարցերի վերաբերյալ տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցել են ԵՄ Բազմաոլորտային բյուջետային աջակցության ծրագրերի հատկացման պայմանների վերանայման թիմի ղեկավար Լոնդա Էսաձեն, ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, ՀԽ աշխատանքային խմբի անդամներ Գրիգոր Բաղիրյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը:

6. 2016թ. ապրիլի 29-ին տեղի է ունեցել ՀԽ լիազումար նիստ, որի օրակարգի հիմնական հարցերից մեկը եղել է ՀՀ-ում Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի քննարկումը:

Նիստին մասնակցել են եղել ՀՀ արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմոյանը, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ Կարեն Զադոյանն ու կազմակերպության վարչության անդամ Մարատ Ատովյանը:

Քննարկվել է փոխնախարար Ս.Քրմոյանի հաղորդումը ՀՀ-ում Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման ուղղությամբ կատարվող քայլերի վերաբերյալ:

ՀԿ-ների ներկայացուցիչները խոսել են կոռուպցիայի բացահայտման, դրա դեմ պայքարի ուղղությամբ տարվող իրենց գործունեության ուղղությունների մասին՝ ներկայացնելով բազմաթիվ առաջարկներ ու ծրագրեր, օրենսդրական նախաձեռնությունների նախագծեր:

ՀԽ անդամները կարևորել են կոռուպցիայի դեմ պայքարում Հանրային խորհրդի մասնակցությունը՝ նշելով, որ ստեղծման օրվանից խորհրդում քննարկվել են կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ հարցեր: ՀԽ անդամները կարևորել են նաև խորհրդում պարբերաբար կոռուպցիայի կանխարգելման թեմայով քննարկումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Բարձրացվել են հարցեր՝ կապված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեության, դրա արդյունավետության և ընդհանրապես կոռուպցիայի դեմ պայքարի ներկա իրավիճակի մասին՝ միաժամանակ քննարկվելով այդ խորհրդի աշխատանքներին ՀԽ մասնակցության նպատակահարմարության և ձևաչափի հարցերը:

7. Հայաստանում կոռուպցիայի, ստվերային տնտեսության, օլիգոպոլիաների և տնտեսական մոնոպոլիաների դեմ պայքարի անհրաժեշտության վերաբերյալ հարցերը ՀԽ անդամների կողմից բարձրացվել են նաև ՀՀ Նախագահի հետ Հանրային խորհրդի հետ 2016թ. մայիսի 4-ին կայացած հանդիպման ընթացքում:

8. 2016թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ Արդարադատության նախարարությունում, Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի, փոխնախարար Սուրեն Քրմոյանի, ՀՀ Հանրային խորհրդի անդամ, Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում-խորհրդակցություն «Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի»>> շրջանակներում Արդարադատության նախարարության և Հանրային խորհրդի համագործակցության ձևաչափի լրամշակման և հստակեցման վերաբերյալ:

Կողմերը պայմանավորվել են պարբերաբար Հանրային խորհրդի և նրանում ստեղծված աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնել Արդարադատության նախարարության կոնկրետ նախաձեռնություններ և այդ նախաձեռնությունների, ռազմավարության միջոցառումների վերաբերյալ ընթացիկ հարցերի քննարկման նպատակով կազմակերպել լսումներ ՀԽ շրջանակներում:

9. 2016թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ-ում «Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի»>> շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում աշխատանքային խմբի անդամներ՝ Հովհաննես Հովհաննիսյանի, (ՀԽ քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ), Գրիգոր Բաղիրյանի, (ՀԽ պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ) ՀԽ պետաիրավական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի անդամ Մարատ Ատովմյանի, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանի, ԵՄ Բազմաոլորտային բյուջետային աջակցության ծրագրերի

հատկացման պայմանների վերանայման խմբի ղեկավար Խաչիկ Հարությունյանի, Եվրամիության քաղաքացիական ծառայության փորձագետ Ուլե Պուրգայի միջև: Հանդիպմանը ներկա է գտնվել ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը: Քննարկման ընթացքում մասնակիցները մտքեր են փոխանակել կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային և երվրոպական փորձի և ՀՀ-ում առկա խնդիրների վերաբերյալ: Հանրային խորհրդի անդամները ներկայացրել են տեղեկատվություն՝ իրենց կողմից կատարված և դեռևս կատարվելիք աշխատանքների վերաբերյալ (կազմակերպելիք լուսմներ, փաստաթղթերի քննարկում):

10. 2016թ. նոյեմբերի 10-ին ՀԽ փոքր խորհրդի նիստի ընթացքում քննարկվել են «ՀՀ քրեական օրենսգրքում» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին նախագծերը՝ մասնավորապես պաշտոնատար անձի կողմից ապօրինի հարստացման քրեականացման նախաձեռնությունը: Քննարկվել է նաև ՀՀ ԱՆ տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգը: Նիստի մասնակիցներ ընդհանուր առմամբ դրական են գնահատել ներկայացված առաջարկություններն ու նախագծերը: Որոշվել է ՀԽ անդամների մի շարք նկատառումներ և հարցադրումներ քննարկել ԱՆ պատասխանատուների հետ՝ ՀԽ աշխատանքային խմբի կողմից կազմակերպվելիք նիստի ընթացքում:

11. 2016թ. նոյեմբերի 17-ին ՀՀ Հանրային խորհրդում «Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի» շրջանակներում տեղի է ունեցել աշխատանքային խմբի նիստ, որին մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ Շուշան Դոյոյանը, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը, ՀՀ Հանրային խորհրդի անդամներ Հովհաննես Հովհաննիսյանը (ՀԽ քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի

նախագահ), Գրիգոր Բաղիրյանը (ՀԽ պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ), Կառլոս Ղազարյանը (ՀԽ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի նախագահ), Վազգեն Սաֆարյանը (ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ):

Աշխատանքային խումբը քննարկել է "ՀՀ քրեական օրենսգրքում" և "ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում" լրացումներ կատարելու մասին նախագծերը՝ մասնավորապես անդրադառնալով պաշտոնատար անձի կողմից ապօրինի հարստացման քրեականացման դրույթին: Քննարկվել է նաև ՀՀ ԱՆ տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգը: Աշխատանքային խմբի անդամների կողմից ներկայացվել են մի շարք առաջարկներ և դիտողություններ, որոնց մեծ մասը ընդունվել է Արդարադատության նախարարության պաշտոնյաների կողմից: Հաշվի առնելով ֆինանսական միջոցների խնայողության ուղղությամբ կառավարության կողմից տարվող քաղաքականությունը՝ առաջարկվել է տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտին վերապահված գործառույթները դնել ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության վրա:

12. 2016թ. դեկտեմբերի 15-ին ՀԽ Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել են լսումներ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման և պատժաչափի կրճատման համակարգում բարեփոխումների փաթեթի քննարկման նպատակով: Միջոցառմանը մասնակցել են Հանրային խորհրդի անդամներ, ՔՀԿ հանձնաժողովի ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը:

Նշվել է, որ 2006թ. ոլորտում իրականացված փոփոխությունները և անկախ հանձնաժողովների ձևավորումը պայմանավորված էին նաև առկա կոռուպցիոն երևույթները վերացնելու նպատակով: Թեև այդ խնդիրը լուծվել է, սակայն պայմանական վաղաժամկետ ազատման և պատժաչափի կրճատման մեխանիզմի գործառնական դաշտի նվազումը, չափորոշիչների հստակեցման անհրաժեշտությունը ենթադրում են նոր փոփոխություններ:

ԱՆ փոխնախարար Ս.Քրմոյանը ներկայացրել է բարեփոխումների հիմնական դրույթներն ու դրանց հիմնավորումները:

Հետ ադամները ընդհանուր առմամբ դրական են գնահատել բարեփոխումների հիմքում ընկած սկզբունքներ: Միաժամանակ բարձրացվել են հարցեր պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման և պատժաչափի կրճատման չափորոշիչների լրամշակման, ոլորտում կոռուպցիոն ռիսկերի բացառման, դատապարտյալների կացության և կենցաղային պայմանների բարելավման, աշխատանքային զբաղվածության, կրթական ծրագրերում ներգրավման, նրանց իրավունքների իրավական պաշտպանության խնդիրների բարելավման վերաբերյալ: Ուշադրություն է հրավիրվել վարչական և անկախ հանձնաժողովների փոխարեն մեկ միասնական հանձնաժողովի ստեղծման պարագայում հասարակական կարգով ընդգրկված անդամների զբաղվածության ավելացման և այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական և նյութական խնդիրների վրա:

13. Ապահովվել է ներկայացված միջոցառումների վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկումը: Դրանց մասին տեղեկատվությունը տեղադրվել է Հանրային խորհրդի պաշտոնական կայքում, հրապարակվել է տպագիր, էլեկտրոնային և ինտերնետային զանգվածային լրատվամիջոցներով: Ապահովվել է ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությունը միջոցառումներին: